ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. N --- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Հ.ԹԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Քանդել Երևան համայնքի սեփականություն հանդիսացող՝ Երևան քաղաքի Հ. Թևոսյան փողոցի հ.9 հասցեում /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.23122021-01-0068/ գտնվող արտադրական շինությունները՝ համաձայն կից ներկայացված ապամոնտաժման սխեմայի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Հ.ԹԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն հանդիսացող՝ Երևան քաղաքի Հ.Թևոսյան փողոցի հ.9 հասցեում գտնվող արտադրական շինությունները քանդելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության առաջացել է այն հանգամանքով, որ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքային կայուն զարգացման ծրագրերի շրջանակներում իրականացվելու է Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի՝ ներկայիս Հ Թևոսյան փողոցի հ.9 հասցեում գտնվող համայնքային գույքի վերակառուցման ծրագիրը:

Հավաքակայանի վերակառուցման համար անհրաժեշտ է լինելու ապամոնտաժել հավաքակայանի վարչական շենքի հետնամասում և հարակից տարածքում գտնվող ու ավտոբուսների կայանման համար ծառայող երկաթբետոնե կոնստրուկցիաները, որոնց ապամոնտաժումից հետո տեղում նախատեսվում է կազմակերպել ավտոբուսների բաց կայանատեղի՝ համապատասխան ասֆալտբետոնե ծածկով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Հ.ԹԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն հանդիսացող՝ Երևան քաղաքի Հ.Թևոսյան փողոցի հ.9 հասցեում գտնվող արտադրական շինությունները քանդելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Հ.ԹԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն հանդիսացող՝ Երևան քաղաքի Հ.Թևոսյան փողոցի հ.9 հասցեում գտնվող արտադրական շինությունները քանդելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում փոփոխություններ չեն նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ